Կազմված է «15» օգոստոս 2020թ.

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

«ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
«15» ՕԳՈՍՏՈՍ 2020Թ.
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«11» 12 2020թ.

գրանցման համար՝ 211.172.1154971

ՀՎՀՀ 04436343

Պետական ռեգիստրի գործակալություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ»

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

2020 թ.

«Ազգային օրակարգ» կուսակցության կանոնադրություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Ազգային օրակարգ» կուսակցությունը (այսուհետ՝ Կուսակցություն կամ ԱՕԿ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ կամավորության հիմունքներով ձևավորված կամավոր միավորում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կուսակցության գործունեությունը հիմնված է օրինականության, հրապարակայնության, անդամների իրավահավասարության, անդամության կամավորության, կառավարման կոլեգիալության և ինքնակառավարման սկզբունքների վրա: Կուսակցությունը ձգտելու է ձևավորել հանրային վստահությունը վայելող համապարփակ ազգային օրակարգ, և քաղաքական իշխանության իրացման միջոցով կյանքի կոչել ինքնիշխան, ազատ, արդար և անվտանգ ազգային պետության կայացումը, դրանով իրականություն դարձնելով մեր հավաքական ազգային իղձերը, և կայուն նախադրյալներ ստեղծելով հայ ազգի հարատև զարգացման համար:

1.2. Կուսակցության նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու,

հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանը, արտահայտմանը ու իրացմանը նպաստելն է: Կուսակցությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական ակտերի, սույն կանոնադրության, ինչպես նաև իր քաղաքական ծրագրի հիման վրա:

1.3. Կուսակցությունը գործում է «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված սկզբունքների հիման վրա:

1.4. Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և օժտվում է իրավունակությամբ:

1.5. Կուսակցության անվանումն է

1.6. հայերեն՝ «Ազգային օրակարգ» կուսակցություն (հապավումը՝ ԱՕԿ)

1.7. ռուսերեն՝ Партия "Национальная повестка" (հապավումը՝ ПНП)

1.8. անգլերեն՝ "National Agenda" party (հապավումը՝ NAP)

1.9. Կուսակցությունն ունի խորհրդանշան, դրոշ, ձևաթուղթ, կլոր կնիք, բանկային հաշիվներ (այդ թվում՝ արտարժութային հաշիվներ):

1.10. Կուսակցության խորհրդանշանը՝ կապույտ ֆոնի վրա ոսկեգույն վահան չորս մասից, որոնք ներառում են խորհրդանշական Արարատ լեռը, արծվի գլուխ, Ա և Օ տառերը:

1.11. Կուսակցության խորհրդանշանը պատկերված է կուսակցության դրոշի, կնիքի, ձևաթղթի, ինչպես նաև Կուսակցությունն անհատականացնող այլ առարկաների վրա:

1.12. Կուսակցության իրավաբանական հասցեն է՝ Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Ռաֆֆու փ. 6/1:

1.13. Սույն կանոնադրությունը ներառում է Կուսակցությանն անդամակցելու և անդամությունը դադարեցնելու պայմաններն ու կարգը, անդամների իրավունքները և պարտականությունները, կառուցվածքը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները, և դրանց գործունեության ժամկետները, կուսակցության համագումարին մասնակցող պատվիրակների ընտրության կարգը, տարածքային ստորաբաժանումների ստեղծման և կազմալուծման կարգը, տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները, և դրանց գործունեության ժամկետները, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը, կուսակցության անդամների նկատմամբ կիրառվող

կարգապահական պատասխանատվության միջոցները, դրանց կիրառման հիմքերն ու կարգը, դրանք կիրառող իրավասու մարմինները, դրամական միջոցների և գույքի ձեռքբերման աղբյուրները, գույքը տնօրինելու և կառավարելու՝ կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների իրավունքները, կուսակցության կողմից իրականացվող ծրագրերի նախաձեռնման և հաստատման, ինչպես նաև համապետական և համայնքային ընտրական ցուցակների ձևավորման կարգը:

2. Կանոնադրության ուժի մեջ մտնելը և փոփոխությունների իրականացման կարգը

2.1. Սույն Կանոնադրությունը ուժի մեջ է մտնում ԱՕԿ Հիմնադիր համագումարի կողմից այն ընդունման օրը, և պետական գրանցում է ստանում ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

2.2. Սույն Կանոնադրության փոփոխություններն ու լրացումները կատարվում են միայն ԱՕԿ Համագումարի որոշմամբ:

2.3. Սույն Կանոնադրության փոփոխությունները և լրացումները ենթադրում են համապատասխան փոփոխություններ ԱՕԿ գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերում:

3. Հասկացություններ

Կանոնադրության մեջ օգտագործվող հասկացություններն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

ԱՕԿ	«Ազգային օրակարգ» կուսակցություն
Կուսակցություն	«Ազգային օրակարգ» կուսակցություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Համագումար	ԱՕԿ կառավարման բարձրագույն մարմին
Հիմնադիրներ	ԱՕԿ հիմնադիր ֆիզիկական անձիք
Խորհուրդ	ԱՕԿ ընդհանուր կառավարման հիմնական մարմին (մշտապես գործող ղեկավար մարմին)

Գործադիր մարմին	ԱՕԿ ընթացիկ կառավարման մարմին
Խորհրդի նախագահ	ԱՕԿ ընդհանուր կառավարման համակարգող
Քաղաքական ծրագիր	ԱՕԿ գործունեության հիմնական ռազմավարական փաստաթուղթ
Վերահսկիչ հանձնաժողով	ԱՕԿ ներքին վերահսկողության հիմնական մարմին
Քարտուղարություն	ԱՕԿ վարչական աշխատանքները իրականացնող մարմին
Գործադիր քարտուղար	ԱՕԿ քարտուղարության գործունեության ընթացիկ համակարգող
Ծրագրային հանձնախումբ	ԱՕԿ առանձին ծրագրերի համակարգման համար ստեղծված խումբ
Տարածքային ստորաբաժանում	ԱՕԿ տարածքային գործունեությունը համակարգող մարմին
Ծրագրային բյուջե	ԱՕԿ կողմից իրականացվող առանձին ծրագրի բյուջե
Վարչական բյուջե	ԱՕԿ ընդհանուր գործառնությունների իրականացման դրամական և այլ նյութական միջոցներ

4. Կուսակցության անդամները

4.1. ԱՕԿ անդամ կարող է լինել տասնութ տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով կիսում է ԱՕԿ Քաղաքական ծրագրի և Կանոնադրության գաղափարներն ու տրամաբանությունը, պատրաստ է գործել ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համաձայն, և պարտավորվում է վճարել սահմանված անդամավճարը: Կուսակցության անդամ չեն կարող լինել այն անձինք, որոնց նկատմամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված են համապատասխան սահմանափակումներ:

4.2. ԱՕԿ անդամությունը հիմնված է կամավորության սկզբունքի վրա: ԱՕԿ անդամագրվում են անհատական կարգով, անձնական դիմումի համաձայն՝ ԱՕԿ խորհրդի որոշմամբ:

4.3. Անդամության դիմումի քննության և որոշման ընդունման կարգը սահմանում է ԱՕԿ խորհուրդը:

4.4. ԱՕԿ խորհուրդը, իր յուրաքանչյուր հերթական նիստին, քննում է տարածքային ստորաբաժանումների միջոցով կամ ուղղակիորեն ստացված անդամակցության դիմումները, հաշվի է առնում դրանց վերաբերյալ Գործադիր մարմնի կարծիքը, և կամ հաստատում է դրանք, կամ մերժում՝ համապատասխան հիմնավորումներ տրամադրելով դիմող քաղաքացուն: ԱՕԿ խորհուրդը դիմող քաղաքացու համար կարող է նաև սահմանել փորձաշրջան, որի ավարտին նորից քննվում է դիմումը:

4.5. Անդամությունը հաստատելու մասին ԱՕԿ խորհրդի որոշման ուժի մեջ մտնելու պահից քաղաքացին համարվում է ԱՕԿ անդամ, և լրիվ ծավալով ստանձնում է ԱՕԿ անդամի իրավունքները և պարտավորությունները:

4.6. ԱՕԿ անդամն իրավունք ունի՝

- ընտրել և ընտրվել ԱՕԿ կառավարման, տարածքային ստորաբաժանումների ղեկավարման, և վերահսկողություն իրականացնող մարմիններում,
- ծրագրային հանձնախմբի ղեկավարի հրավերով մասնակցել ծրագրային հանձնախմբի աշխատանքներին և տեղեկանալ նրա արդյունքներից,
- տեղեկատվություն ստանալ ԱՕԿ գործունեության, այդ թվում՝ ԱՕԿ առանձին մարմինների գործունեության վերաբերյալ,
- ԱՕԿ խորհրդի համաձայնությամբ՝ կասեցնել և հետագայում վերականգնել ԱՕԿ անդամությունը,
- իր դիմումի համաձայն՝ դադարեցնել ԱՕԿ անդամությունը,
- մասնակցել ԱՕԿ մարմինների այն նիստերին, որոնց ընթացքում քննվում են իրեն ուղղակիորեն վերաբերվող (անհատական) հարցեր, նիստի ընթացքում արտահայտել իր կարծիքը,
- ԱՕԿ կառավարման մարմիններին ներկայացնել ԱՕԿ նպատակներից և գործունեությունից բխող առաջարկություններ և դիրքորոշումներ,
- իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

4.7. ԱՕԿ անդամը իրավունք չունի գործել կամ հանդես գալ ԱՕԿ անունից, եթե նա լիազորված չի ԱՕԿ համապատասխան կառավարման մարմնի կողմից:

4.8. ԱՕԿ անդամը պարտավոր է՝

- Գործել ՀՀ Սահմանադրության և օրենքներին, սույն կանոնադրությանը, ԱՕԿ քաղաքական Ծրագրին, և ԱՕԿ կառավարման մարմինների որոշումներին համապատասխան,
- Վճարել ԱՕԿ Խորհրդի կողմից սահմանված անդամավճարը,
- Մասնակցել ԱՕԿ կազմակերպած միջոցառումներին:

4.9. ԱՕԿ անդամությունը դադարում է՝
- Անդամի դիմումի համաձայն,
- Կուսակցությունից հեռացվելու դեպքում,
- Կուսակցության լուծարման դեպքում,
- Մահվան դեպքում:

4.10. ԱՕԿ կանոնադրությամբ, ինչպես նաև ղեկավար մարմինների որոշումներով նախատեսված պահանջները չկատարելու դեպքում, ԱՕԿ Գործադիր մարմինը ԱՕԿ անդամի նկատմամբ կարող է կիրառել հետևյալ կարգապահական պատասխանատվության միջոցները՝
- Նկատողություն,
- խիստ նկատողություն,
- Կուսակցությունից հեռացում:

ԱՕԿ անդամն իրավունք ունի մեկ անգամ վիճարկել իր նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու մասին յուրաքանչյուր որոշումը՝ ԱՕԿ խորհրդին, որի որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

4.11. ԱՕԿ անդամը, ԱՕԿ խորհրդին ներկայացված իր դիմումի համաձայն, կարող է դուրս գալ կուսակցությունից: Այդ դեպքում, նա պարտավոր է կատարել իր անդամության ընթացքում ծագած ֆինանսական պարտավորությունները, և ԱՕԿ համապատասխան տարածքային ստորաբաժանմանը հանձնել իր տնօրինության տակ գտնվող ԱՕԿ գույքը և փաստաթղթերը, ներառյալ էլեկտրոնային:

5. ԱՕԿ համագումարը

5.1. Համագումարը ԱՕԿ կառավարման բարձրագույն մարմինն է:

5.2. ԱՕԿ հերթական համագումարը գումարվում է չորս տարին մեկ անգամ:

5.3. Համագումարի պատվիրակներին ընտրում են ԱՕԿ անդամները՝ ԱՕԿ հինգ անդամից մեկ պատվիրակ համամասնությամբ, բայց ոչ ավել, քան 500 պատվիրակ: Եթե ԱՕԿ անդամների թիվը գերազանցում է 2500-ը, ապա յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանում ստանում է պատվիրակներ ընտրելու՝ ընդհանուր 500 պատվիրակից իր թվակազմին համաչափ քվոտա:

5.4. Պատվիրակների ընտրությունը համակարգում են ԱՕԿ տարածքային ստորաբաժանումները՝ ԱՕԿ խորհրդի հաստատած կանոնակարգին համապատասխան: ԱՕԿ գործող խորհրդի բոլոր անդամները ի պաշտոնե հանդիսանում են համագումարի պատվիրակներ՝ ներկայացնելով նաև իրենց տարածքային ստորաբաժանումները: Համագումարի մյուս պատվիրակներին ընտրում են տարածքային ստորաբաժանումների անդամները՝ տվյալ ստորաբաժանմանը տրամադրված քվոտայի թվով՝ հանած տվյալ ստորաբաժանման անդամ հանդիսացող ԱՕԿ խորհրդի անդամների թիվը:

5.5. Համագումարը լսում և պատվիրակների ձայների մեծամասնությամբ հաստատում է ԱՕԿ խորհրդի քաղաքական հաշվետվությունը՝ նախորդ համագումարից անցած ժամանակաշրջանի համար:

5.6. Համագումարը հաստատում է ԱՕԿ քաղաքական ծրագրում փոփոխությունները կամ ընդունում է նոր քաղաքական ծրագիր՝ պատվիրակների ձայների երկու երրորդով:

5.7. Համագումարը ընդունում է փոփոխություններ ԱՕԿ կանոնադրության մեջ՝ պատվիրակների ձայների երկու երրորդով:

5.8. Համագումարը պատվիրակների ձայների մեծամասնությամբ հաստատում է ԱՕԿ խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի թվակազմը, ընտրում խորհուրդ և վերահսկիչ հանձնաժողով՝ մինչև հաջորդ համագումար գործունեության համար: ԱՕԿ խորհրդի թվակազմը չի կարող 100 անդամից ավել լինել, իսկ վերահսկիչ հանձնաժողովի թվակազմը՝ գերազանցել ԱՕԿ խորհրդի թվակազմի 50%:

5.9. Համագումարը ընտրում է ԱՕԿ խորհրդի անվանական կազմը՝ մինչև հաջորդ համագումար գործունեության համար: Այս նպատակով, ԱՕԿ գործող խորհուրդը մինչև համագումարը ձևավորում է ԱՕԿ խորհրդի թեկնածուների նախնական ցուցակ, որը ներկայացվում է համագումարին: Համագումարի ընթացքում, ցանկացած պատվիրակ իրավունք ունի առաջադրել իր թեկնածությունը, որի արդյունքում ձևավորվում է թեկնածուների վերջնական ցուցակ: Խորհրդի ընտրությունը տեղի է ունենում ռեյտինգային քվեարկության միջոցով, համագումարի յուրաքանչյուր պատվիրակի կողմից ցուցակում առաջադրված թեկնածուներին իր հայեցողությամբ առավելագույնը ԱՕԿ խորհրդի անդամների թվով և նվազագույնը դրանց 50 տոկոսի (կլորացված, եթե կենտ է) թվով ձայն բաշխելու միջոցով: Հիմնադիր համագումարի դեպքում, ցուցակի կազմման գործառույթը իրականացնում է պատվիրակների կողմից ընտրված հաշվիչ հանձնաժողովը:

5.10. Համագումարը ընտրված ԱՕԿ խորհրդի անդամների կազմից ընտրում է ԱՕԿ խորհրդի նախագահին՝ պատվիրակների ձայների բացարձակ մեծամասնությամբ: ԱՕԿ խորհրդի նախագահի թեկնածու իրավասու է առաջադրվել նորընտիր խորհրդի

ցանկացած անդամ: ԱՕԿ խորհրդի նախագահի ընտրությունն իրականացվում է գաղտնի քվեարկությամբ, և առնվազն երկու թեկնածուների առկայության դեպքում:

5.11. Համագումարը ընտրում է ԱՕԿ վերահսկիչ հանձնաժողով՝ մինչև հաջորդ համագումար գործունեության համար: Այս նպատակով, ԱՕԿ գործող վերահսկիչ հանձնաժողովը համագումարի ընթացքում ձևավորում է թեկնածուների ցուցակ, որում իրավունք ունի առաջադրվել համագումարի ցանկացած պատվիրակ, բացառությամբ ԱՕԿ խորհրդի ընտրված անդամների: Վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունը տեղի է ունենում ռեյտինգային քվեարկության միջոցով համագումարի յուրաքանչյուր պատվիրակի կողմից ցուցակում առաջադրված թեկնածություններից մեկին ընտրելու միջոցով: Հիմնադիր համագումարի ժամանակ, ցուցակի կազման գործառույթը իրականացնում է պատվիրակների կողմից ընտրված հաշվիչ հանձնաժողովը:

5.12. ԱՕԿ համագումարը 5.5-5.11 կետերում նշած որոշումները ընդունում է փակ քվեարկության միջոցով:

5.13. Անհրաժեշտության դեպքում, ԱՕԿ խորհուրդը իրավասու է հրավիրել ԱՕԿ արտահերթ համագումար՝ խորհրդի անդամների ձայների երկու երրորդով: Այդ դեպքում, տարածքային ստորաբաժանումներին հրավերն ուղարկվում է համագումարից առնվազն երկու շաբաթ առաջ:

5.14. Տարածքային ստորաբաժանումները ևս կարող են նախաձեռնել ԱՕԿ արտահերթ համագումար: Այդ դեպքում, տարածքային ստորաբաժանումները պետք ընդունեն համապատասխան որոշում իրենց անդամների ձայների երկու երրորդով, և դիմեն ԱՕԿ խորհրդին: Տարածքային ստորաբաժանումների առնվազն երկու երրորդի կողմից դիմումների առկայության դեպքում, ԱՕԿ խորհուրդը պարտավոր է հրավիրել ԱՕԿ արտահերթ համագումար:

5.15. ԱՕԿ հիմնադիր համագումարը հրավիրում են ԱՕԿ հիմնադիրները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հիմնադիր համագումարի բացառիկ իրավասության մեջ է գտնվում ԱՕԿ կազմավորումը, ԱՕԿ կանոնադրության և քաղաքական ծրագրի ընդունումը: Հիմնադիր համագումարի աշխատանքները համակարգելու և քվեարկությունները կազմակերպելու նպատակով, ԱՕԿ հիմնադիրները ընտրում են հաշվիչ հանձնաժողով: Հիմնադիր համագումարի բացառիկ իրավասության մեջ մտնող որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ:

6. ԱՕԿ խորհուրդը

6.1. ԱՕԿ խորհուրդը իրականացնում է կուսակցության կառավարումը համագումարների միջև ընկած ժամանակահատվածում, և պատասխանատու է կուսակցության քաղաքական ծրագրի իրականացման համար:

6.2. ԱՕԿ խորհրդի անդամներին ընտրում է ԱՕԿ Համագումարը՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, սույն կանոնադրության 5.9 հոդվածում սահմանված կարգով: ԱՕԿ խորհրդի անդամ են ընտրվում առավելագույն թվով ձայներ հավաքած, խորհրդի հաստատված թվակազմի թվով պատվիրակները: Եթե ԱՕԿ խորհրդի կազմում առաջադրված մի քանի պատվիրակ ստացել են հավասար թվով ձայներ, և արդյունքում հնարավոր չէ ճշգրտորեն լրացնել խորհրդի հաստատված թվակազմը, ապա համագումարը իրավասու է կամ ընդլայնել խորհրդի կազմը, կամ էլ այդ պատվիրակների միջև անցկացնել լրացուցիչ քվեարկություն՝ խորհրդի վերջնական կազմը որոշելու նպատակով:

6.3. ԱՕԿ խորհրդի անդամ կարող են ընտրվել ԱՕԿ այն անդամները, որոնք ունեն առնվազն մեկ տարվա ԱՕԿ անդամություն (բացառությամբ՝ Հիմնադիր համագումարի), և պատրաստ են ավելացված ֆինանսական պարտավորություններ ստանձնել՝ տարեկան անդամավճարի հնգապատիկի չափով:

6.4. Եթե համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում ԱՕԿ խորհրդի անդամը կամավոր վայր է դնում իր պարտականությունները, կամ հնարավորություն չունի դրանք իրականացնել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով, կամ էլ հեռացվում է կուսակցությունից՝ ԱՕԿ խորհրդի այդ անդամին խորհրդի որոշմամբ կարող է փոխարինել ռեյտինգային ցուցակի հաջորդ պատվիրակը:

6.5. Եթե ԱՕԿ խորհրդի անդամը ընտրվում կամ նշանակավում է այնպիսի պաշտոնի, որը զբաղեցնելու պարագայում արգելված է կուսակցական գործունեությունը, ապա նա կարող է դիմել խորհրդին՝ ժամանակավորապես կասեցնելու իր կուսակցական անդամությունը: Արգելքը վերանալու պահից, անդամությունը ԱՕԿ խորհրդին կարող է վերականգնվել՝ խորհրդի համապատասխան որոշմամբ: Սույն կարգավորումը վերաբերվում է ԱՕԿ խորհրդի բոլոր անդամներին, ներառյալ՝ ԱՕԿ խորհրդի նախագահին, և գործադիր մարմնի անդամներին:

6.6. ԱՕԿ խորհրդի պարտադիր նիստերը կայանում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ, եթե խորհուրդը այլ ժամանակացույց չի հաստատել: ԱՕԿ խորհուրդը կարող է որոշում ընդունել նաև ըստ անհրաժեշտության լրացուցիչ նիստեր անցկացնելու վերաբերյալ:

6.7. ԱՕԿ խորհուրդը հաստատում է գործադիր մարմնի թվակազմը հաջորդ չորս տարիների գործունեության համար: ԱՕԿ խորհուրդն իրավասու է անհրաժեշտության դեպքում, վերանայել գործադիր մարմնի թվակազմը:

6.8. ԱՕԿ խորհուրդը իր կազմից ընտրում է գործադիր մարմին՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, յուրաքանչյուր անդամի կողմից 3 ձայն խորհրդի այն

անդամներին բաշխելու միջոցով, որոնք պատրաստ են աշխատել գործադիր մարմնում:

6.9. ԱՕԿ խորհրդի նիստերի օրակարգը մշակում է գործադիր մարմինը: Օրակարգը ներկայացնում է ԱՕԿ խորհրդի նախագահը:

6.10. ԱՕԿ խորհուրդը քննարկում և հաստատում է ԱՕԿ քաղաքական ռազմավարությունը, քաղաքական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների պլանը և հիմնական չափորոշիչները, ծրագրերի բյուջեները և ֆինանսավորման աղբյուրները, քննարկում և ընդունում է ծրագրերի կատարողականները՝ ըստ հիմնական նպատակային չափորոշիչների և ծրագրերի բյուջեների, ինչպես նաև հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվը:

6.11. ԱՕԿ խորհուրդը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի ընտրությունների և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրությունների ընտրական ցուցակները:

6.12. ԱՕԿ խորհուրդը ընդունում է որոշումներ՝ նախընտրական դաշինքների և այլ քաղաքական դաշինքների, այլ պետությունների կամ օտարերկրյա կուսակցությունների հետ համագործակցության, կուսակցական միություններին անդամագրության, նախընտրական ծրագրի հաստատման, կուսակցության կազմից քաղաքական պաշտոնների նշանակման վերաբերյալ:

6.13. ԱՕԿ խորհուրդը հաստատում է տարածքային ստորաբաժանումների ստեղծումը և լուծարումը:

6.14. ԱՕԿ խորհուրդը քննարկում և հաստատում է ԱՕԿ տարեկան վարչական բյուջեն:

6.15. ԱՕԿ խորհուրդը իր որոշմամբ ընդունում է ԱՕԿ նոր անդամներին՝ գործադիր մարմնի և տարածքային ստորաբաժանումների ներկայացման հիման վրա: Խորհուրդը հաստատում կամ չեղարկում է գործադիր մարմնի որոշումները՝ ԱՕԿ անդամներին նկատողություն հայտարարելու, և կամ կուսակցությունից հեռացնելու մասին:

6.16. Իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները և լրացումները:

6.17. ԱՕԿ խորհրդի նիստին քվեարկելու իրավունք ունեն նիստին ֆիզիկապես ներկա գտնվող խորհրդի անդամները: Անհրաժեշտության դեպքում, ԱՕԿ խորհրդի

անդամները կարող են նիստին միանալ հեռակապով, այդ դեպքում նրանք պետք է մեկ շաբաթում գրավոր հաստատեն իրենց քվեարկության արդյունքը:

6.18. ԱՕԿ խորհուրդը իրավասու է կայացնել որոշումներ խորհրդի անդամների երկու երրորդի և գործադիր մարմնի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում:

6.19. Որոշման ընդունման համար անհրաժեշտ է ԱՕԿ խորհրդի ներկա անդամների ձայների երկու երրորդը: Խորհրդի որոշումները ընդունվում են բաց քվեարկության միջոցով:

6.20. ԱՕԿ գործադիր մարմնի անդամների կեսի կամ ԱՕԿ խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ, կարող է հրավիրվել խորհրդի արտահերթ նիստ: Այդ դեպքում, խորհրդի անդամներին հրավերն ու նիստի օրակարգը ուղարկվում է նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ:

7. ԱՕԿ գործադիր մարմինը

7.1. ԱՕԿ գործադիր մարմինն իրականացնում է ԱՕԿ ընթացիկ կառավարումը հաստատված քաղաքական ծրագրի և բյուջեի շրջանակներում, և իրավասու է ընդունել ԱՕԿ ընթացիկ կառավարման և իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ ցանկացած որոշում, որը չի գտնվում ԱՕԿ խորհրդի և Համագումարի իրավասության մեջ:

7.2. Գործադիր մարմնի կազմը ընտրում է ԱՕԿ խորհրուրդը՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից խորհրդի ինքնառաջադրված անդամներին երեք ձայն բաշխելու միջոցով: Գործադիր մարմնի անդամ են ընտրվում առավելագույն թվով ձայներ հավաքած, գործադիր մարմնի հաստատված թվակազմի թվով խորհրդի անդամները: Ընտրությանը մասնակցող խորհրդի անդամների միջև ձայների հավասարության դեպքում, խորհուրդը կարող է որոշում ընդունել ընդլայնել գործադիր մարմնի թվակազմը կամ անցկացնել լրացուցիչ քվեարկություն: ԱՕԿ խորհրդի նախագահը ի պաշտոնե նաև գործադիր մարմնի ղեկավարն է:

7.3. Եթե գործադիր մարմնի անդամը կամավոր կասեցնում կամ վայր է դնում իր պարտականությունները, կամ հնարավորություն չունի դրանք իրականացնել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով, կամ հեռացվում է կուսակցությունից, խորհուրդը իր հաջորդ նիստին իր անդամների թվից ընտրում է գործադիր մարմնի նոր անդամ՝ ձայների բացարձակ մեծամասնությամբ:

7.4. Գործադիր մարմնում աշխատանքը կրում է հիմնական բնույթ և վարձատրվում է: Գործադիր մարմնի անդամը իր վրա պարտականություն է վերցնում այլ վարձատրվող աշխատանքով չզբաղվել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ աշխատանքը պայմանավորված է ԱՕԿ խորհրդի հաստատած պետական կամ հասարակական բնույթի գործառնությունների իրականացմամբ, ինչպես նաև գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեությամբ: Եթե գործադիր մարմնի անդամը ընտրվում կամ նշանակավում է այնպիսի պետական պաշտոնի, որը զբաղեցնելու պարագայում արգելված է համատեղության կարգով վարձու աշխատանքը, ապա նա իր հետագա կուսակցական գործունեությունը իրականացնում է առանց վարձատրության:

7.5. Գործադիր մարմինը իր հերթական նիստերն անցկացնում է առնվազն շաբաթը մեկ անգամ՝ անդամների կողմից նիստին ներկա գտնվելու, իսկ բացառիկ դեպքերում, նաև հեռակա կապի միջոցներով՝ իրական ժամանակում: Գործադիր մարմնի նիստը իրավասու է, եթե ներկա է անդամների առնվազն երկու երրորդը, և ԱՕԿ խորհրդի նախագահը (բացառիկ դեպքերում՝ հեռակապի միջոցով):

7.6. Գործադիր մարմինը որոշում է կայացնում անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Անհամաձայնության դեպքում, ԱՕԿ խորհրդի նախագահը իրավունք ունի կասեցնել գործադիր մարմնի որոշումը: Այդ դեպքում գործադիր մարմինը իրավունք ունի ձայների երկու երրորդով վերացնել ԱՕԿ խորհրդի նախագահի՝ գործադիր մարմնի որոշման կասեցումը:

7.7. Գործադիր մարմինը, իր ընթացիկ գործունեության շրջանակներում, կարող է առանց խորհրդի հաստատման ընդունել այն որոշումները, որոնք չեն գտնվում ԱՕԿ համագումարի և խորհրդի բացառիկ իրավասությունների շրջանակներում և ըստ էության չեն հակասում խորհրդի նախկինում ընդունած որոշումներին: Գործադիր մարմինն իր ընդունված բոլոր որոշումների վերաբերյալ պարտավոր է ամենամսյա համառոտ հաշվետվություն ներկայացնել ԱՕԿ խորհրդին:

7.8. Գործադիր մարմինը, ընթացիկ անհրաժեշտությունից ելնելով, իրավասու է վերանայել իրականացվող ծրագրերը և դրանց հատկացվող միջոցները, եթե դա չի հակասում ԱՕԿ խորհրդի նախկինում ընդունված որոշումներին, և չի գերազանցում նախկինում ընդունված ծրագրային բյուջեները ավելի քան 20 տոկոսով: Նման դեպքերում գործադիր մարմինը պարտավոր է որոշման ընդունումից հետո մեկ շաբաթվա ընթացքում տեղեկացնել դրա մասին խորհրդի բոլոր անդամներին: Հետագայում, ծրագրերի և դրանց հատկացվող բյուջեի փոփոխությունները պետք է հաստատի կամ վերանայի ԱՕԿ խորհուրդը:

7.9. Գործադիր մարմինը ընդունում է որոշումներ՝ ԱՕԿ անդամներին նկատողություն հայտարարելու, և/կամ ԱՕԿ կազմից հեռացնելու մասին: Այդ որոշումները հետագայում պետք է հաստատի ԱՕԿ խորհրուրդը:

7.10. Գործադիր մարմինը իրավասու է իր անդամների միջև բաշխել պատասխանատվություն՝ ըստ քաղաքական ծրագրի հիմնական ուղղությունների և/կամ գործունեության այլ խելամիտ տարաբաժանման:

7.11. Գործադիր մարմինը տնօրինում է ԱՕԿ վարչական բյուջեն, և պատասխանատու է միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար:

7.12. Գործադիր մարմնի անդամների մեկ երրորդի կամ ԱՕԿ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, կարող է հրավիրվել գործադիր մարմնի արտահերթ նիստ: Այդ դեպքում, գործադիր մարմնի անդամներին հրավերն ու նիստի օրակարգը ուղարկվում է նիստից առնվազն մեկ օր առաջ:

8. ԱՕԿ խորհրդի նախագահը

8.1. ԱՕԿ խորհրդի նախագահը իրականացնում է ԱՕԿ գործունեության ընդհանուր համակարգումը:

8.2. Խորհրդի նախագահը ընտրվում է համագումարի կողմից, ձայների բացարձակ մեծամասնությամբ, խորհրդի գործունեության ամբողջ ժամկետով:

8.3. Եթե ԱՕԿ խորհրդի նախագահը կամավոր կասեցնում կամ վայր է դնում իր պարտականությունները, կամ հնարավորություն չունի դրանք իրականացնել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով, խորհուրդը պարտավոր է առավելագույնը երկամսյա ժամկետում հրավիրել ԱՕԿ արտահերթ համագումար, որում պետք է ընտրվի ԱՕԿ խորհրդի նոր նախագահ:

8.4. ԱՕԿ խորհրդի նախագահի գործունեությունը կրում է հիմնական բնույթ և վարձատրվում է: Խորհրդի նախագահը իր վրա պարտականություն է վերցնում այլ վարձատրվող աշխատանքով չզբաղվել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ աշխատանքը պայմանավորված է ԱՕԿ խորհրդի հաստատած քաղաքական բնույթի գործառնությունների իրականացմամբ: Եթե ԱՕԿ խորհրդի նախագահը ընտրվում կամ նշանակվում է այնպիսի պետական պաշտոնի, որը զբաղեցնելու դեպքում արգելված է համատեղության կարգով վարձու աշխատանքը, ապա նա իր հետագա կուսակցական գործունեությունը իրականացնում է առանց վարձատրության:

8.5. ԱՕԿ խորհրդի նախագահը հրավիրում է գործադիր մարմնի ընթացիկ և արտահերթ նիստերը և ձևավորում է դրանց օրակարգը: Խորհրդի նախագահը իրավասու է վարել գործադիր մարմնի և խորհրդի նիստերը, և կամ իր հայեցողությամբ այդ իրավասությունը պատվիրակել գործադիր մարմնի այլ անդամի: Խորհրդի նախագահը նաև իր հայեցողությամբ կարող է պատվիրակել իր

այլ իրավասությունները գործադիր մարմնի ցանկացած անդամի, եթե ժամանակավորապես չի կարող դրանք լիարժեք իրականացնել:

8.6. ԱՕԿ խորհրդի նախագահը իրավասու է հանդես գալ ԱՕԿ գործադիր մարմնի և խորհրդի անունից քաղաքական հայտարարություններով՝ այդ մարմինների համապատասխան որոշումների հիման վրա: Խորհրդի նախագահը պատասխանատու է ԱՕԿ քարտուղարության գործունեության ընդհանուր ղեկավարման համար:

9. ԱՕԿ վերահսկիչ հանձնաժողովը

9.1. ԱՕԿ վերահսկիչ հանձնաժողովը ԱՕԿ ներքին վերահսկողությունն իրականացնող հիմնական մարմինն է: Հանձնաժողովի թվակազմը որոշում է համագումարը:

9.2. Վերահսկիչ հանձնաժողովի կազմը ընտրում է ԱՕԿ համագումարը՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, յուրաքանչյուր պատվիրակի կողմից 1 ձայն առաջադրված այլ պատվիրակներին տալու միջոցով: Հանձանաժողովի անդամ են ընտրվում առավելագույն թվով ձայներ հավաքած, հանձնաժողովի հաստատված թվակազմի թվով պատվիրակները: Առավելագույն ձայներ ստացած պատվիրակը, առանց նոր քվեարկության, դառնում է հանձնաժողովի նախագահ: Նրա հրաժարականի դեպքում հանձնաժողովի նախագահ է դառնում առավելագույն ձայներ ստացած հաջորդ պատվիրակը:

9.3. Առաջին վերահսկիչ հանձնաժողովի կազմը ընտրվում է հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ: Վերահսկիչ հանձնաժողովը, տարին մեկ անգամ, իրականացնում է ԱՕԿ գործունեության ներքին աուդիտ, որը ներառնում է ինչպես ֆինանսկան ռեսուրսների օգտագործման թափանցիկության և արդյունավետության, այնպես էլ կազմակերպչական արդյունավետության գնահատականը: Ներքին աուդիտի արդյունքները տրամադրվում են ԱՕԿ խորհրդին, որն իրավասու է այն տրամադրել ԱՕԿ այլ մարմիններին:

9.4. Վերահսկիչ հանձնաժողովը ամփոփիչ հաշվետվություն է ներկայացնում ԱՕԿ հերթական համագումարին: Ըստ անհրաժեշտության, վերահսկիչ հանձնաժողովը կարող է նաև ամփոփիչ հաշվետվություն ներկայացնել ԱՕԿ արտահերթ համագումարին:

10. ԱՕԿ քարտուղարությունը

10.1. ԱՕԿ քարտուղարությունը պատասխանատու է վարչական գործառույթների համար և իրականացնում է ԱՕԿ ծրագրերի իրականացման գործառնական ապահովումը:

10.2. Քարտուղարության կառուցվածքը ներկայացնում է ԱՕԿ խորհրդի նախագահը, հաստատում է գործադիր մարմինը:

10.3. Գործադիր մարմինը ընտրում է գործադիր քարտուղար, որը մշտական աշխատանքի հիման վրա, իրականացնում է քարտուղարության գործունեության ընթացիկ ղեկավարությունը:

10.4. Քարտուղարության աշխատակիցներին նշանակում է ԱՕԿ խորհրդի նախագահը՝ գործադիր քարտուղարի ներկայացմամբ: Քարտուղարության աշխատակիցները հաշվետու են գործադիր քարտուղարին:

10.5. Քարտուղարությունը պատասխանատու է տարեկան վարչական բյուջեի կազմման և ԱՕԿ խորհրդին ներկայացման համար, և հետագայում հաշվետու է խորհրդի հաստատած բյուջեի կատարման համար:

10.6. Քարտուղարությունը պատասխանատու է ԱՕԿ խորհրդի և գործադիր մարմնի հաստատած ծրագրերի տեխնիկական առաջադրանքի, իրականացման ճանապարհային քարտեզի և բյուջեի կազմման համար:

10.7. Քարտուղարությունը պատասխանատու է խորհրդից և արտաքին աղբյուրներից ԱՕԿ ծրագրերի իրականացման համար հանգանակությունների փաստացի հավաքագրման, վարչական ու ծրագրային ծախսերի միջև բաշխման և ծախսերի արդյունավետության ապահովման համար՝ համապատասխան հաստատված վարչական և ծրագրային բյուջեների:

10.8. Քարտուղարության շրջանակներում կարող են ձևավորվել ժամանակավոր ծրագրային խմբեր՝ օժանդակելու ԱՕԿ տարբեր մարմինների կողմից իրականացվող ծրագրերի աշխատանքին:

10.9. Քարտուղարության աշխատակիցների գործունեության գնահատականը և վարձատրության պայմանները ԱՕԿ խորհրդի նախագահի ներկայացմամբ սահմանում է գործադիր մարմինը՝ հաստատված տարեկան ընդհանուր բյուջեի շրջանակներում:

10.10. Քարտուղարությունում աշխատանքը կրում է հիմնական բնույթ և վարձատրվում է: Քարտուղարության աշխատակիցները իրենց վրա

պարտականություն են վերցնում այլ վարձատրվող աշխատանքով չզբաղվել, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեության, եթե դա անմիջականորեն համաձայնեցված չէ ԱՕԿ գործադիր մարմնի հետ:

11. ԱՕԿ տարածքային ստորաբաժանումները

11.1. ԱՕԿ տարածքային ստորաբաժանումները Երևան քաղաքի վարչական շրջաններում և ՀՀ մարզերում (այսուհետ՝ տարածք) տեղական մակարդակով ԱՕԿ գործունեությունը իրականացնող հիմնական մարմիններն են:

11.2. Տարածքային ստորաբաժանումը ձևավորվում է, եթե տվյալ տարածքում բնակվող ԱՕԿ անդամների թիվը գերազանցում է 10-ը: Տարածքային ստորաբաժանման ձևավորումը հաստատում է ԱՕԿ խորհուրդը:

11.3. Տարածքային ստորաբաժանումը իր ձևավորումից հետո իր անդամների կազմից ընտրում է տարածքային վարչություն՝ տվյալ տարածքի շրջանակներում ԱՕԿ գործունեության համակարգման համար:

11.4. Տարածքային ստորաբաժանումը իր անդամների թվից ընտրում և ԱՕԿ խորհրդի հաստատմանն է ներկայացնում համապետական և տվյալ տարածքում գտնվող համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրության թեկնածուների ցուցակը: Թեկնածուների ընտրության կարգը սահմանում է ԱՕԿ խորհուրդը:

11.5. Տարածքային ստորաբաժանման վարչությունը (տարածքային վարչություն) ձևավորվում է տվյալ տարածքում գործող ԱՕԿ բոլոր անդամներից, 5 անդամին 1 ներկայացուցիչ հարաբերակցությամբ, բայց ոչ ավել քան 15 ներկայացուցիչ: Տարածքային վարչության ընտրությունը տեղի է ունենում տվյալ տարածքում բնակվող ԱՕԿ անդամների ընդհանուր ժողովի միջոցով, որը իրավասու է անդամների առնվազն երկու երրորդի առկայության դեպքում: Տարածքային վարչությունն ընտրվում է 2 տարի ժամկետով:

11.6. Տարածքային վարչությունն իր անդամների թվից ձայների մեծամասնությամբ ընտրում և ԱՕԿ խորհրդի հաստատմանն է ներկայացնում տարածքի համակարգողի թեկնածությունը: Ներկայացված թեկնածությունը ԱՕԿ խորհրդում չհաստատվելու դեպքում, տարածքային վարչությունը նույն կարգով ընտրում և ներկայացնում է այլ թեկնածու: Տարածքի համակարգող չի կարող միաժամանակ լինել ԱՕԿ խորհրդի անդամ:

11.7. Տարածքային վարչությունը քննարկում և հաստատում է տվյալ տարածքում իրականացվող տեղական նշանակության ծրագրերը, դրանց նպատակները և

հիմնական չափորոշիչները, ծրագրերի բյուջեները և ֆինանսավորման միջոցները, ինչպես նաև քննարկում և ընդունում է ծրագրերի կատարողականը՝ ըստ հիմնական նպատակային չափորոշիչների և ծրագրերի բյուջեների: Տարածքային վարչությունը պատասխանատվություն է կրում տեղական ծրագրերի դրամահայթաթման և ԱՕԿ վարչական բյուջեով տարածքային ստորաբաժանմանը տրամադրված դրամական միջոցների և գույքի արդյունավետ կառավարման համար: Տարածքային վարչության որոշումները կարող են չեղարկվել ԱՕԿ խորհրդի պատճառաբանված որոշմամբ: Այդպիսի դեպքերում, տարածքային վարչությունը ունի խորհրդի որոշումը մեկ անգամ վիճարկելու իրավունք:

11.8. Համապետական ծրագրերի իրականացման շրջանակներում, տարածքային վարչությունը համակարգում է ծրագրերի իրականացումը տվյալ տարածքում՝ ենթարկվելով ԱՕԿ խորհրդի որոշումներին:

11.9. Տարածքային վարչությունը ԱՕԿ խորհրդի հաստատմանն է ներկայացնում տվյալ տարածքից ԱՕԿ նոր անդամների թեկնածությունները:

11.10. Տարածքային վարչությունն իր հերթական նիստերն անցկացնում է առնվազն ամիսը մեկ անգամ:

11.11. Տարածքային վարչության նիստին քվեարկության իրավունք ունեն նիստին ֆիզիկապես ներկա անդամները, բացառիկ դեպքերում նրանք կարող են միանալ նիստին հեռակապով: Այդ դեպքում նրանք պետք է մեկ շաբաթում գրավոր հաստատեն իրենց քվեարկության արդյունքը:

11.12. Տարածքային վարչությունը իրավասու է կայացնել որոշումներ իր անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումները ընդունվում են բաց քվեարկության միջոցով՝ ներկաների պարզ մեծամասնությամբ:

11.13. Տարածքի համակարգողի կամ տարածքային վարչության անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել տարածքային վարչության արտահերթ նիստ: Այդ դեպքում, տարածքային վարչության անդամներին հրավերն ու նիստի օրակարգը ուղարկվում է նիստից առնվազն մեկ օր առաջ:

11.14. Տարածքի համակարգողի աշխատանքը կարող է վարձատրվել: Անհրաժեշտության դեպքում, և համապատասխան նյութական միջոցների առկայության պայմաններում, կարող են վարձատրվել նաև տարածքային վարչության այլ անդամներ: Վարձատրության անհրաժեշտության և չափի մասին համապատասխան որոշումն ընդունում է ԱՕԿ գործադիր մարմինը՝ տարածքային վարչության ներկայացման հիման վրա:

11.15. Եթե տվյալ տարածքում բնակվող ԱՕԿ անդամների թիվը նվազում է 10-ից, ԱՕԿ խորհուրդը իրավասու է իր որոշմամբ լուծարել համապատասխան տարածքային ստորաբաժանումը՝ միացնելով այն այլ տարածքային ստորաբաժանման և դադարեցնել նրա վարչության գործունեությունը:

11.16. ԱՕԿ տարածքային ստորաբաժանման անդամներն իրենց կազմից բաց քվեարկության միջոցով երկու տարի ժամկետով ընտրում են տարածքային ստորաբաժանման վերահսկիչ հանձնաժողով: Հանձնաժողովի թվակազմը որոշվում է տարածքային վարչության կողմից: Հանձնաժողովի ընտրված անդամներն իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ:

11.17. ԱՕԿ տարածքային ստորաբաժանման վերահսկիչ հանձնաժողովն իրականացնում է տարածքային ստորաբաժանման վարչության աշխատանքների նկատմամբ վերահսկողություն՝ վերջինի գործունեության մշտադիտարկման և արդյունքների վերաբերյալ տարածքային ստորաբաժանման ընդհանուր ժողովին և ԱՕԿ խորհրդին ներկայացվող զեկույցի միջոցով:

11.18. Վերահսկիչ հանձնաժողովն իրավունք ունի՝

11.18.1. Հարցադրումներ անել տարածքային ստորաբաժանման վարչությանը կապված իրենց գործառույթների իրականացման հետ,

11.18.2. Տարածքային ստորաբաժանման վարչությունից պահանջել և ստանալ իրենց կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ և տեղեկություն:

11.19. Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է իրականացնել ԱՕԿ տարածքային ստորաբաժանման վարչության աշխատանքների մշտադիտարկում և առնվազն տարեկան մեկ անգամ տարածքային ստորաբաժանմանը և ԱՕԿ խորհրդին ներկայացնել մշտադիտարկման արդյունքների զեկույց:

12. ԱՕԿ ծրագրային հանձնախումբ

12.1. ԱՕԿ ծրագրային հանձնախումբը պատասխանատու է ԱՕԿ խորհրդի կամ գործադիր մարմնի հաստատած առանձին քաղաքական ծրագրերի մշակման, միջոցների հայթայթման, և իրականացման համար:

12.2. Ծրագրային հանձնախումբը ձևավորվում է կամավորության սկզբունքով, և նրա վերջնական կազմը հաստատում է ԱՕԿ խորհուրդը: Այն դեպքում, երբ ծրագիրը սկսվել է գործադիր մարմնի նախաձեռնությամբ, ծրագրային հանձնախմբի կազմը կարող է սահմանվել գործադիր մարմնի կողմից, հետագայում ԱՕԿ խորհրդում հաստատվելու պայմանով:

12.3. Ծրագրային հանձնախումբը իրականացվող ծրագրի ամփոփիչ արդյունքները ներկայացնում է խորհրդին և պարտավոր է գործադիր մարմնի պահանջով միջանկյալ արդյունքները ներկայացնել նաև գործադիր մարմնին:

12.4. Ծրագրային հանձնախմբում կարող են ներգրավված լինել գործադիր մարմնի անդամներ, խորհրդի անդամներ, քարտուղարության աշխատակիցներ, տարածքային վարչությունների անդամներ, ԱՕԿ անդամներ, ինչպես նաև կարող են հրավիրվել արտաքին փորձագետներ:

12.5. Յուրաքանչյուր ծրագրային հանձնախմբի համար ԱՕԿ խորհուրդը հաստատում է ծրագրի ղեկավար կուսակցության անդամների թվից, ով համակարգում է ծրագրային հանձնախումբը, և պատասխանատվություն է կրում խորհրդի առաջ ծրագրի արդյունքների համար:

12.6. Ծրագրի ղեկավարը իր ընթացիկ գործունեության մեջ հաշվետու է գործադիր մարմնին:

12.7. Ծրագրային հանձնախումբը պատասխանատու է ծրագրի իրականացման համար ֆինանսավորման աղբյուրներ գտնելու համար՝ գործադիր մարմնի աջակցությամբ:

12.8. Ազգային անվտանգության հետ անմիջականորեն առնչվող, ինչպես նաև այլ ռազմավարական կարևորության ծրագրերը կարող են ղեկավարել միայն ԱՕԿ խորհրդի անդամները, ովքեր անձամբ են որոշում ծրագրային հանձնախմբի կազմը, և ներկայացնում են այն խորհրդի հաստատմանը:

13. Բյուջետավորում

13.1. Յուրաքանչյուր տարվա վարչական բյուջեն, ռեզերվը և շարունակական բնույթ կրող, կանխատեսելի տարեկան ծախսերով ծրագրերի բյուջեները հաստատում է ԱՕԿ խորհուրդը՝ նախորդ տարվա վերջին ամսվա ընթացքում:

13.2. Մնացած ծրագրերի համար բյուջեները հաստատվում են ծրագրերի ընդունմանը զուգահեռ՝ ԱՕԿ խորհրդի կողմից, իսկ դրանց ընթացիկ փոփոխության դեպքում՝ գործադիր մարմնի կողմից:

13.3. Տարեկան վարչական բյուջեն խորհրդի հաստատմանն է ներկայացնում ԱՕԿ խորհրդի նախագահը՝ նախապես համաձայնեցնելով գործադիր մարմնի հետ:

13.4. Ծրագրային բյուջեները խորհրդի հաստատմանն են ներկայացնում համապատասխան ծրագրային հանձնախմբերի ղեկավարները՝ նախապես համաձայնեցնելով գործադիր մարմնի հետ:

14. Ֆինանսավորում (դրամական միջոցների և գույքի ձեռք բերման աղբյուրները)

14.1. Ամեն տարվա սկզբում գործադիր մարմինը հավաքագրում է ֆիքսված դրամական միջոցների, գույքի և գույքային իրավունքների տրամադրման վերաբերյալ հանձնառությունները, որոնք նախատեսված են վարչական բյուջեի և ռեզերվի համար:

14.2. ԱՕԿ անդամների ամենամյա անդամավճարը սահմանում է ԱՕԿ խորհուրդը՝ 2 տարին մեկ: ԱՕԿ խորհրդի անդամները վճարում են ամենամյա անդամավճար՝ ԱՕԿ անդամների համար սահմանված անդամավճարի հնգապատիկ չափով:

14.3. ԱՕԿ բոլոր անդամները անդամավճարները պետք է վճարեն տարվա ընթացքում համաչափ՝ տարին չորս անգամ՝ եռամսյա վճարումներով, ամենաուշը մինչև եռամսյակի հաջորդ ամսվա վերջին աշխատանքային օրը: Մինչև եռամսյակի ավարտը համապատասխան անդամավճարը չվճարած ԱՕԿ անդամներին ԱՕԿ քարտուղարությունը ուղարկում է հիշեցում:

14.4. Անդամավճարը մինչև համապատասխան վերջնաժամկետը չվճարած խորհրդի անդամը զրկվում է խորհրդի անդամի իրավունքներից՝ մինչև համապատասխան պարտավորության լրիվ ծավալով կատարումը: Անդամավճարը մինչև համապատասխան վերջնաժամկետը չվճարած ԱՕԿ անդամը զրկվում է ԱՕԿ անդամի իրավունքներից՝ մինչև համապատասխան ֆինանսական պարտավորության լրիվ ծավալով կատարումը:

14.5. Ընթացիկ տարում բյուջեում հավելուրդի առկայության դեպքում, գոյացած միջոցները տեղափոխվում են հաջորդ տարվա բյուջե:

14.6. Ընթացիկ տարում բյուջեում պակասուրդի առկայության դեպքում խորհուրդը որոշում է կայացնում պակասուրդը ծածկելու համար լրացուցիչ միջոցներ ներգրավելու մասին, և կամ համապատասխան չափով կրճատում է ծախսերը:

14.7. Ցանկացած նոր ծրագրի քննարկման ժամանակ, հաստատվում է անհրաժեշտ ֆինանսավորման չափը, և առաջարկ է արվում խորհրդի և համապատասխան ծրագրային հանձնախմբի անդամներին ֆինանսավորել ծրագիրը, և կամ մասնակցել դրամահայթայթման աշխատանքներին՝ ԱՕԿ անդամների և համակիրների շրջանակներում:

14.8. Միայն բավարար ֆինանսավորման հանձնառության առկայության դեպքում ծրագիրը կարող է վերջնական հաստատվել խորհրդում, այլապես ծրագրի ծավալները կամ իրականացման ժամանակացույցը պետք է վերանայվեն՝ ապահովելու ծրագրի մուտքերի և ելքերի միջև համապատասխանությունը:

14.9. Խորհրդի այն անդամները, ովքեր ներառված են ծրագրային հանձնախմբում, համատեղ պատասխանատվություն են կրում տվյալ ծրագրի ֆինանսավորման հայթայթման համար:

14.10. Արտաքին աղբյուրներից ֆինանսավորման ներգրավվման դեպքում, հնարավոր նվիրատուի թեկնածությունը պետք է հաստատի գործադիր մարմինը, հնարավոր շահերի բախումից խուսափելու նպատակով:

14.11. Ծրագրերի համար կատարվող նվիրատվությունները հավաքագրվում են ԱՕԿ հաշվին կատարվող փոխանցումների միջոցով:

14.12. Կուսակցության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներն իրավունք ունեն կառավարելու իրենց տիրապետությանը հանձնված կուսակցության դրամական միջոցները և գույքը:

15. Համապետական և համայնքային ընտրությունների ցուցակների ձևավորումը

15.1. ԱՕԿ խորհուրդը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրությունների ընտրական ցուցակները:

15.2. ԱՕԿ խորհուրդը ձևավորում է Ազգային ժողովի ընտրությունների ընտրական ցուցակը՝ հիմք ընդունելով ԱՕԿ տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները: Այս նպատակով, բոլոր տարածքային ստորաբաժանումները ներկայացնում են համապատասխան տարածքներից առաջադրվող թեկնածուների ցուցակը: Խորհուրդը իր հայեցողությամբ կատարում է ընտրություն՝ առաջարկված թեկնածուների կազմից, իրավասու է ներառել լրացուցիչ թեկնածուներ, և որոշում է ցուցակում նրանց հերթականությունը: Այս նպատակով, խորհուրդը իրավասու է նաև հարցում անցկացնել կուսակցության անդամների շարքերում: Խորհուրդը հաստատում է վերջնական ցուցակը իր ձայների երկու երրորդով:

15.3. ԱՕԿ խորհուրդը ձևավորում է Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրությունների ընտրական ցուցակները հիմք ընդունելով ԱՕԿ տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները: Այս նպատակով, նշված տարածքային ստորաբաժանումները ներկայացնում են համապատասխան տարածքներից առաջադրվող թեկնածուների ցուցակը: Խորհուրդը կատարում է ընտրություն՝ առաջարկված թեկնածուների կազմից, իրավասու է ներառել լրացուցիչ թեկնածուներ, և որոշում է ցուցակում նրանց հերթականությունը: Այս նպատակով,

խորհուրդը իրավասու է նաև հարցում անցկացնել կուսակցության անդամների շարքերում: Խորհուրդը հաստատում է վերջնական ցուցակը իր ձայների երկու երրորդով:

15.4. ԱՕԿ խորհուրդը հաստատում է ՀՀ մնացալ բոլոր համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ընտրության թեկնածուների ցուցակները՝ հիմք ընդունելով ԱՕԿ համապատասխան տարածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված նախնական ցուցակները: Այս նպատակով, այն տարածքային ստորաբաժանումը, որի տարածքում է գտնվում տվյալ համայնքը, ներկայացնում է թեկնածուների նախնական ցուցակը: Խորհուրդը կամ հաստատում է ներկայացված ցուցակը, կամ էլ տվյալ տարածքային ստորաբաժանմանը առաջարկում է հիմնավորված փոփոխություններ մտցնել ցուցակում: Խորհուրդը հաստատում է վերջնական ցուցակը իր ձայների երկու երրորդով:

16. Լուծարում և վերակազմակերպում

16.1. Իր կանոնադրական գործառույթների իրականացման անհնարինության դեպքում ԱՕԿ-ը կարող է լուծարվել: ԱՕԿ լուծարման բացառիկ իրավասություն ունի ԱՕԿ համագումարը:

16.2. Այլ կուսակցության միանալու, միաձուլվելու, բաժանվելու կամ առանձնանալու դեպքում ԱՕԿ-ը վերակազմակերպվում է: ԱՕԿ վերակազմակերպման բացառիկ իրավասություն ունի ԱՕԿ համագումարը:

16.3. ԱՕԿ լուծարման կամ վերակազմակերպման նախաձեռնությամբ ԱՕԿ արտահերթ համագումար կարող է հրավիրել ԱՕԿ խորհուրդը՝ անդամների բացարձակ թվի երկու երրորդի ձայներով կայացված որոշմամբ, կամ ԱՕԿ անդամների առնվազն երկու երրորդը ներկայացնող տարածքային ստորաբաժանումների նախաձեռնությամբ՝ այդ ստորաբաժանումների կայացրած որոշումների և խորհրդին ներկայացված համապատասխան դիմումների հիման վրա:

16.4. ԱՕԿ լուծարումը կամ վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ միայն ԱՕԿ համագումարի պատվիրակների ձայների երկու երրորդով ընդունված որոշմամբ:

16.5. ԱՕԿ լուծարման դեպքում ԱՕԿ գույքը տնօրինվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: